

ԿԱՐՄԻՔ

Ռուզան Ալբերտի Մկրտչյանի «Սևանի ավազանի կենսահնագիտությունը (միջին և ուշ բրոնզի դարաշրջաններ)» է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական սատիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ»

Ատենախոսությունը բաղկացած է ութ զլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և նկարների ու աղյուսակների հավելվածից: Նկարներն ու աղյուսակները հաջողությամբ լրացնում են շարադրանքը, նպաստում աշխատության բովանդակության ամբողջական ընկալմանը: Բուն տեքստը 184 էջ է: Որպես համեմատական նյութ ներկայացված է նաև Արթիկի գանգաբանական հավաքածուն (էջ 25-26):

Ներածությունում ընդգծվում են կենսահնագիտության հնարավորությունները հին հասարակությունների կենսակերպի վերակազմությունն իրականացնելիս, որի շնորհիվ դրանց սոցիալ-մշակութային պատկերն առավել ամբողջական է դառնում: Առաջին անգամ է, երբ դամբանադաշտերի պեղումներով հայտնաբերված միջին և ուշբրոնզեդարյան հնամարդաբանական հավաքածուներն ուսումնասիրվում են կենսահնագիտական, մասնավորապես՝ ատամնաախտաբանական մեթոդներով: Առաջին անգամ է նաև, որ Սևանի ավազանի հին բնակչության հետ համեմատելու նպատակով, ուսումնասիրվել են Մոսկվայի պետական համալսարանի մարդաբանության թանգարանում պահվող հարավոուսական տափաստանների դամբանաբլուրների պեղումներով ձեռք բերված համաժամանակյա գանգաբանական հավաքածուները: Երկու տարբեր իրողությունների հետազոտության արդյունքում կազմվել է ատամնաախտաբանական ցուցիչների հանդիպման համեմատական վիճակագրություն, որը «ծայրահեղորեն» տարբեր է հիշյալ երկու խմբերի համար: Լճաշենի և Ներքին Գետաշենի հնամարդաբանական հավաքածուների հետազոտության հիման վրա արտածվել են ննջեցյալների մարդաբանական նկարագրերը և վերակազմվել է այդ հանրությունների հնարավորինս հավաստի ժողովրդագրական պատկերը: Աշխատության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած երեք տասնյակ ուսումնասիրություններում, իսկ դրանց արդյունքները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Առաջին զլխում տրվում է Հայաստանի միջին և ուշբրոնզեդարյան հնամարդաբանության քննական վերլուծությունը: Սույն ուսումնասիրության մեջ

ընդգրկվել և մեկնաբանվում են բոլոր այն աշխատությունները, որոնցում անդրադարձ է եղել Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչության մարդաբանությանը՝ ըստ գանգաբանական տվյալների: Չի կարելի չհամաձայնվել հեղինակի այն դիտողության հետ, որ արտեֆակտերի վերակազմողական հնարավորությունները սլետթ է հավաստի համարել միայն այն դեպքում, երբ «ուսումնասիրվող նյութը տիպաբանված, քարտեզագրված և վիճակագրորեն վեր է լուծված ստույգ պատմամշակութային համատեքստում»: Նախկինում Լճաշենի գանգաբանական հավաքածուն վերագրվել է ուշ բրոնզի շրջափուլին: Ատենախոսության հեղինակը, համագործակցելով հնագետներ Ա. Փիլիպոսյանի և Պ. Ավետիսյանի հետ, համադրել է Հ. Մնացականյանի հավաքագրած գանգաբանական հավաքածուն հնագիտական նյութերի հետ և թվագրել գանգերից յուրաքանչյուրը: Այդ դժվարին ու մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ գանգաբանական հավաքածուն բաժանվել է ժամանակագրական երկու միջակայքի, որոնք թվագրվում են մ.թ.ա. XVIII-XVI դդ. (սևան-արցախյան մշակույթ) և մ.թ.ա. XV-XIII դդ. (լճաշեն-մեծամորյան մշակույթ): Վերջինը, իր հերթին, տրոհվել է երկու ենթախմբի՝ մ.թ.ա. XV-XIV դդ. և մ.թ.ա. XIV-XIII դդ.: Հիշյալ գանգաբանական հավաքածոներին գումարվել են Լ. Պետրոսյանի պեղումներով ձեռք բերված կենսափաստերը, որոնցից էլ կազմված են Լճաշենի միջին և ուշբրոնզեդարյան ժողովածուները: Հնարավոր է, որ հիշյալ հավաքածուն ամենաբազմաքանակը լինի Կովկասի տարածաշրջանում: Նույն կերպ նոր ուսումնասիրության է ենթարկվել Ցամաքաբերդի մարդաբանական հավաքածուն, որը գիտական գրականության մեջ մինչ այժմ համարվել է ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան ընտրույթ: Ռ. Մկրտչյանին՝ հնագետներ Ա. Փիլիպոսյանի և Բ. Վարդանյանի օգնությամբ, հաջողվել է պարզել, որ Ցամաքաբերդի գանգերը հայտնաբերվել են սևան-արցախյան մշակույթին պատկանող դամբարաններում, որոնք թվագրվում են մ.թ.ա. XVIII-XVI դարերով: Այս վերաթվագրումից հետո պարզ է դարձել, որ Վ. Ալեքսենի՝ «մեծադեմ և երկարակերպ գանգերով հանրություն» բնորոշումը վերաբերվում է սևան-արցախյան մշակույթը կրողներին:

Երկրորդ գլխում նկարագրվում են Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան դամբանային համալիրները, որոնք ուսումնասիրվել են ավելի քան 125 տարի շարունակվող հնագիտական աշխատանքների արդյունքում: Ատենախոսության շրջանակներում հատկապես ուսումնասիրվել են Լճաշենի, Ցամաքաբերդի, Նորատուսի, Արծվաքարի, Դարի գլխի, Հացառատի, Քանազեղի, Ներքին Գետաշենի, Նորաբակի դամբանադաշտերի միջին և ուշբրոնզեդարյան փակ համալիրների պեղումներով հայտնաբերված ու ստույգ թվագրություն ունեցող հնամարդաբանական

հավաքածոները: Սերնդե-սերունդ հիշատակվել են այն մասնագետները, որոնք իրենց ավանդն են ներդրել Սևանի ավազանի հնագիտական ուսումնասիրության գործում: Հեղինակի ուշադրության կենտրոնում է եղել հատկապես Լճաշենի դամբարանադաշտը, որի անունով է կոչվում Հայկական լեռնաշխարհի հնագիտական հանրահայտ մշակույթներից մեկը: Հնագիտական հուշարձանների սլեդուճներով ստացված տվյալների հիման վրա ատենախոսը գալիս է այն եզրակացության, որ քննարկվող տարածաշրջանի վաղբրոնզեդարյան հասարակությունը չի ունեցել ընդգծված սոցիալական շերտավորում, բնակչությանը բնորոշ է եղել տնտեսավարման երկրագործական-անասնապահական եղանակը: Կուր-արաքսյան մշակույթի ավարտին Սևանի ավազանում պատկերը փոխվել է: Բնակչության քանակն սկսել է ավելանալ, տնտեսության մեջ առաջատար է դարձել անասնապահությունը: Մ.թ.ա. XXII-XIX/XVIII դարերում Գեղարքունիքում լայն տարածում է ստանում թռեղք-վանաձորյան մշակույթը, իսկ XVIII դարից սկսած նկատելի են դառնում սևան-արցախյան, կարմիրբերդյան, վան-ուրմիական մշակութային խմբերին բնորոշ դրսևորումներ: Հիմնավորվում է Սևանի ավազանում ձևավորված մարտունակ տոհմացեղային կազմավորումների գոյությունն ու շքանշանի դարաշրջանում, որի վկայություններն են ավազանու թաղման ծեսի շքեղ մանրամասները (միտաննական կնիքներ, միջերկրածովյան ու պարսիցծոցյան ծովախեցիներ, անագից ու ոսկուց պատրաստված պերճանքի առարկաներ և այլն):

Երրորդ գլուխը նվիրված է Լճաշենի դամբարանադաշտի մարդաբանությանը: Ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում գանգաչափական և ոսկրաչափական միջինացված տվյալների վերլուծությունների արդյունքները: Լճաշենում հայտնաբերված գանգերի հավաքածուն դիտարկվում է ըստ ժամանակագրական փուլերի՝ սևան-արցախյան մշակութային խումբ, ՈւԲ 1 և ՈւԲ 2: Այս երեք խմբերից յուրաքանչյուրը բաժանվում է երկու ենթախմբի՝ տղամարդ և կին ննջեցյալների գանգաչափական տվյալները քննարկվում են առանձին: Պարզվում է, որ Լճաշենի դամբարանադաշտում հայտնաբերված ուշբրոնզեդարյան բազմաքանակ հավաքածուն (չափագրվել են տղամարդկանց 110 և կանաց 95 գանգեր) պատկանում է մեկ հանրության: Ուշ բրոնզի դարաշրջանում Լճաշենի բնակչությունն առավել նրբակազմ է դառնում, որը կարող է հետևանք լինել նրբակազմ տարրի ներթափանցման՝ հիշյալ տարածք: Ի տարբերություն միջին բրոնզի դարաշրջանի, ուշ բրոնզի շրջափուլում (կարևոր հատկանիշների միջինացված ցուցանիշների համեմատության արդյունքում) ընդգծված սեռային երկկերպություն չի դիտարկվում: Ինչպես վերն ասվեց, Լճաշենի մարդաբանական հավաքածուն, ըստ երևույթին, ամենաներկայացուցչականն է կովկասյան տարածաշրջանում: Այն չափազանց արժեքավոր է նաև կմախքի ոսկրերի

անհատական դիտարկումների թվաքանակով: Ատենախոսը՝ ոսկրաչափական միջինացված տվյալների վերլուծությամբ, հետաքրքիր եզրահանգումներ է կատարել: Օրինակ, ուշբրոնզեդարյան հավաքածոյում նկատելի է բազկոսկրի ասիմետրիկության աջակողմյան առավելությունը: Տղամարդկանց միջին հասակը միջին բրոնզի դարաշրջանում կազմում է 168,7 սմ, կանանց միջին հասակը՝ 159,7 սմ: Ուշբրոնզեդարյան բնակչության համապատասխան ցուցանիշներն են՝ 169,6 սմ և 159,6 սմ: Լճաշենի դամբանադաշտում հայտնաբերված կմախքների չափագրական ցուցիչները բնութագրում են միջին և ուշբրոնզեդարյան բնակչության արական խմբին՝ միջինից բարձր հասակով, իզական խմբին՝ որպես բարձրահասակ:

Չորրորդ գլխում քննարկվում է Ներքին Գետաշենի դամբանադաշտի հնամարդաբանությունը: Այստեղ սևան-արցախյան մշակույթը ներկայացված է մեկ դամբարանով (№ 21), որի ուսումնասիրությունը ներառել է տղամարդ ու կին ննջեցյալների 7-ական գանգ: Լճաշեն-մեծամորյան մշակույթի դամբարանները շատ ավելին են, իսկ դրանցում գտնված գանգերը՝ քառապատիկ ավելի: Ներքին Գետաշենի գանգաբանական հավաքածոն ուսումնասիրելիս Ռ. Մկրտչյանը հատուկ ուշադրություն է դարձրել համաժամանակյա ծիսակարգով կատարված բազմամարդ թաղումներին: Դրանք վերաբերում են մշակութային տարբեր շրջափուլերի և, հավանաբար, տարբեր սոցիալական կազմ ունեցող հանրույթների: Ներքին Գետաշենի դամբանադաշտի հնամարդաբանության ուսումնասիրությունը կարևորվում է ոչ միայն խմբային թաղումների առկայությամբ, այլև այն հանգամանքով, որ այստեղ թաղումներ են կատարվել շուրջ մեկ ու կես հազարամյակ՝ միջին բրոնզից մինչև զարգացած երկաթի շրջափուլ: Քննարկվող հատվածաբաժնում հեղինակը մանրամասնորեն ներկայացրել է միջին բրոնզի, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում միաժամանակյա ծիսակարգով կատարված խմբային թաղումներից հայտնաբերված գանգերի ձևաբանական նմանությունների ու տարբերությունների հետազոտության արդյունքները: Գանգաբանական չափումները կատարվել են ըստ 43 հատկանիշների: Հատկանիշների ընդհանուր քանակը խմբավորվել է ըստ գանգի առանձին անատոմիական հատվածների: Հեղինակը եկել է այն եզրակացության, որ քննարկվող դամբանադաշտում հայտնաբերված տղամարդ ննջեցյալների գանգերը միջին բրոնզ-վաղ երկաթի դարաշրջաններում ենթարկվել են մեզոկրանիզացիայի, իսկ կին ննջեցյալների գանգերի չափերի փոփոխականությունը միջին և ուշ բրոնզի դարաշրջաններում նվազել է (էջ 87-88):

Հինգերորդ գլուխը նվիրված է միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական ընտրությունների անհատական տվյալների կանոնիկ դիսկրիմինանտային

վերլուծությանը: Հիշյալ վերլուծությունն իրականացվել է տղամարդ ննջեցյալների 150 և կին ննջեցյալների 118 զանգերի 22 հատկանիշների հիման վրա (բոլոր հատկանիշները թվարկվում են): Շատ կարևոր է, որ շարադրանքը զուգորդվում է աղյուսակներով ու նկարներով, սակայն բուն տեքստը ևս ինքնին հասկանալի է ձևակերպված: Օրինակ, էջ 100-ում (անհատական տվյալների կանոնիկ դիսկրիմինանտային վերլուծության վերաբերյալ) նշվում է, որ կոորդինատների սկզբնակետին մոտ բաշխված դիտարկումները առավելագույն միջինացված ձևաբանության կրողներն են, իսկ ըստ անկյունագծի (հակադիր քառորդներում - ԳԹ) հեռու տեղադրվածները՝ ամենատարամիտված օրինակները: Էջ 101-ում նշվում է, որ Ցամաքաբերդի զանգվածեղ զանգասկավառակով, երկարադեմ տղամարդիկ զբաղեցնում են կոորդինատային հարթության չորրորդ քառորդը՝ ընտրույթի մյուս տարրերից զգալի հեռավորության վրա: Բավական է հայացք գցել նկ. 51-ին, որպեսզի պարզ դառնա այս պնդման ճշմարտացիությունը: Ի դեպ, ձևաբանական նման տարամիտվածությունը բացատրվում է մյուսների համեմատությամբ հիշյալ զանգերի առավել վաղեմությամբ: Տպավորություն է ստեղծվում, որ Լճաշենի միջինբրոնզեդարյան տղամարդ ննջեցյալների զանգերը ձևաբանորեն միջանկյալ դիրք են զբաղում Ցամաքաբերդի և Ներքին Գետաշենի նմուշների միջև: Վիճակագրական տվյալների ամփոփման արդյունքում աշխատության հեղինակը գալիս է այն եզրակացության, որ մ.թ.ա. XV դարից սկսած բնակչության ինտեգրացման գործընթացն ակտիվանում է, որն ուղեկցվում է մարդաբանական տիպի՝ դեպի նրբակազմությունը, փոփոխությամբ: Ասվածն ակնհայտորեն տեսանելի է գրաֆիկական պատկերներում: Այսպիսով, «Էկզոգամ ամուսնությունների շնորհիվ Սևանի ավազանի ուշբրոնզեդարյան հասարակությունը ... ենթարկվել է ձևաբանական փոխակերպումների, որը դրսևորվել է զանգի բացարձակ չափերի նկատելի նվազեցմամբ»:

Վեցերորդ գլխում կատարվում է զանգաբանական հավաքածոների հնաֆենետիկական համեմատական վերլուծություն, որտեղ հնահանրությունների ֆենետիկական տարամիտությունը հաշվարկված է «տարամիտության միջին չափ» կոչվող չափորոշիչով: Սևանի ավազանի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան զանգերի հավաքածոները համեմատվել են կատակոմբային, աֆանասյան և անդրոնովյան մշակույթների կրողների զանգաբանական հավաքածոների հետ: Ռ. Մկրտչյանի հետազոտությունները փաստում են Ներքին Գետաշենի ուշբրոնզեդարյան և վաղերկաթեդարյան խմբերի նմանությունները: Ակունքի հավաքածոյի որոշ առանձնացվածությունը բացատրվում է այդ դամբանադաշտի մյուսներից ունեցած

հեռավորությամբ: Երկաթի դարում ֆենետիկական տարբերակվածությունը մեծանում է: Ըստ «տարամիտության միջին չափի» հաշվարկված հեռավորությունների (նկ. 71) կարելի է առանձնացնել խմբավորումների երեք զույգ. ա) Հայաստանի ուշ բրոնզի և երկաթի դարաշրջանների, բ) յամնայա և կատակոմբային մշակույթների, գ) աֆանասյան ու անդրոնովյան մշակույթների հավաքածոները: Ատենախոսը գալիս է այն հետևության, որ Սևանի ավազանի հին հանրությունները ուշ բրոնզի դարաշրջանում ցուցաբերում են ժառանգաբանական զուգամիտություն, իսկ երկաթի դարաշրջանում՝ որոշակի տարամիտություն և բազմազանություն:

Յոթերորդ գլուխը վերնագրված է. «Սևանի ավազանի միջին և ուշ բրոնզի դարերի հնաժողովրդագրությունը»: Այս հատվածաբաժնում սոցիալ-ժողովրդագրական համապատկերի վերակազմության փորձ է արվում: Վերլուծության են ենթարկվում ինչպես բնակչության կյանքի տևողությունն ընդհանրապես, այնպես էլ նույն ցուցանիշը՝ սեռատարիքային տարբեր խմբերի համար: Կարևորվում է այն հանգամանքը, որ Լճաշենի և Ներքին Գետաշենի դամբանադաշտերի պեղումներով ձեռք բերված հնամարդաբանական տվյալները համապատասխանում են հնաժողովրդագրական հավաստի վերլուծությանը ներկայացվող պահանջներին (հնամարդաբանական նյութի պահպանվածության անհրաժեշտ աստիճան, գիտական չափորոշիչներին համապատասխան պատմամշակութային տեղեկություններ և այլն): Ատենախոսության մեջ հատկապես ուշադրության են արժանացել այն համաժամանակյա խմբային թաղումները, որոնցում ամփոփվել են սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող ննջեցյալներ՝ զոհաբերված մարդկանց ուղեկցությամբ: Նման եզրակացության հիմք են հանդիսացել դամբանասրահներում հանգուցյալների դիակների և ուղեկցող ճոխ զույթի հիերարխիկ տեղադրվածության փաստերը: Ներքին Գետաշենի դամբանադաշտի խմբային թաղումների կապակցությամբ արված է 101 դիտարկում, որից 29-ը՝ վերաբերում են միջին, իսկ 72-ը՝ ուշ բրոնզի դարաշրջանին: Լճաշենի դամբանադաշտի թաղումների կապակցությամբ արված է 288 դիտարկում: Այստեղ գործ ունենք երկու հավաքածոների հետ՝ Լճաշեն 1 (Հ. Մնացականյանի պեղումներ. գանգեր թե՛ անհատական, թե՛ խմբային թաղումներից) և Լճաշեն 2 (Լ. Պետրոսյանի պեղումներ. հնամարդաբանական նյութեր գրեթե բոլոր թաղումներից): Լճաշենում աչքի է զարնում կանանց մահացության բարձր ցուցանիշը 15-ից 35 տարեկանում: Միևնույն ժամանակ, Լճաշենի միջին և ուշբրոնզեդարյան բնակչության երկարակեցության բարձր ցուցանիշը ձևավորվել է ի հաշիվ տղամարդկանց, որոնք գտնվել են սոցիալապես առավել ապահով վիճակում: Այս հատվածաբաժնում

անդրադարձ է արվում նաև հայոց ավանդապատումներից մեկում տեղ գտած մարդկանց գոհաբերության ծիսակարգին:

Ութերորդ գլխի քննարկման առարկան բրոնզեդարյան հնահանրության ատամնաախտաբանությունն է, որը հետազոտվել է Լճաշենի, Ներքին և Վերին Գետաշենի, Նորասուսի, Քանազեղի, Դարի գլխի, Հացառատի, Նորաբակի և այլ դամբանադաշտերի գանգաբանական հավաքածոների հիման վրա: Այս գլխում Հայաստանի հնամարդաբանական հավաքածոները դիտարկվել են ատամնաախտաբանության և ֆիզիոլոգիական սթրեսի համատեքստում: Հետազոտվել են ատամնաախտաբանական վեց հատկանիշներ (արսցես, կարիես, ատամնաքար և այլն), որոնք ֆիզիոլոգիական սթրեսի բնորոշիչներ են համարվում: Օրինակ, ատամնաքարի հանդիպման հաճախականությունն ըստ սեռատարիքային խմբերի դիտարկելիս պարզվում է, որ այն առկա է բոլոր տարիքի կանանց և 35 տարեկանից բարձր տղամարդկանց կեսից ավելիի մոտ: Սևանի ավազանի հնաատամնաախտաբանական իրավիճակը գնահատելու նպատակով, ստացված արդյունքները համեմատվել են ինչպես առաջավորասիական հրատարակված տեղեկատվության, այնպես էլ հարավուսական տափաստանների համապատասխան տվյալների հետ: Ի դեպ, վերջինիս և հայկական նյութի ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը նույնն են, ուստի այդ երկու հավաքածոները գիտականորեն համադրելի են:

Վերջում ի մի են բերվում ուսումնասիրության արդյունքները և կատարվում են համապատասխան եզրակացություններ: Ասվում է, որ միջին և ուշ բրոնզի դարաշրջաններում սոցիալական, մշակութային և բնակլիմայական պայմանների փոփոխություններն իրենց հետքն են թողել հնամարդաբանական նյութի վրա: Սևանի ավազանի միջինբրոնզեդարյան բնակչությունը բնութագրվում է միջինից բարձր հասակով, գլխի երկարագանգությամբ, գանգասկավառակի մեծ ծավալով, ծայրահեղ երկարադիմությամբ ու քթի պրոֆիլավորվածությամբ: Ուշ բրոնզի դարաշրջանում մարդկանց հասակը գրեթե չի փոխվում, նվազում են միայն գլխի չափերը: Կանանց կյանքի տևողությունը կարճ է եղել, նրանց մահացությունը բարձր է եղել սերնդագործության տարիքում: Համայնքում տարեց տղամարդիկ զգալի թիվ են կազմել շնորհիվ իրենց երկարակեցության: Ըստ ատամնաախտաբանական հետազոտությունների արդյունքների՝ հնահասարակությունը քաղցի չի ենթարկվել: Ատենախոսը դա բացատրում է համալիր տնտեսաձևի ընձեռած հնարավորություններով: Երկրագործությունն ապահովել է բնակչությանը

ածխաջրերով հարուստ սննդամթերքով, անասնապահությունը՝ սպիտակուցային ու ճարպային, իսկ ծովամթերքը՝ միներալներով առատ սննդով:

Այս աշխատության մեջ արծարծված հարցերը համառոտ ներկայացնելուց հետո, դրական գնահատական տալով քննարկվող դոկտորական ատենախոսությանը, կկամենայինք ներկայացնել որոշ առաջարկներ և հայտնել ընդհանուր բնույթի նկատառումներ, որոնք կարող են օգտակար լինել այս ուսումնասիրությունը հրատարակության նախապատրաստելիս:

1 Առաջարկներից մեկը վերաբերում է ատենախոսության կառուցվածքին: Մեր կարծիքով, ատենախոսության երրորդ և չորրորդ գլուխները կարելի է միավորել և ներկայացնել մեկ ենթավերնագրի ներքո (Գլուխ երրորդ, Լճաշենի և Ներքին Գետաշենի դամբանադաշտերի հնամարդաբանությունը): Նույն կերպ կարելի է միավորել հինգերորդ և վեցերորդ գլուխները (Գլուխ չորրորդ), քանի որ երկուսն էլ նվիրված են վերլուծություններին. հինգերորդ գլխում կատարվել է կանոնիկ դիսկրիմինանտային վերլուծություն, իսկ վեցերորդում՝ հնաֆենետիկական համեմատական վերլուծություն: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հինգերորդ գլուխն ութ էջ ծավալ ունի, իսկ վեցերորդը՝ ընդամենը հինգ էջ, այն դեպքում, երբ առաջին գլուխը բաղկացած է 24 էջից, երկրորդ գլուխը՝ 30 էջից և այլն: Եթե մեր առաջարկն ընդունվի, ապա գլուխների քանակը երկուսով կպակասի, իսկ ատենախոսության կառուցվածքն առավել ներդաշնակ տեսք կունենա:

2 Ատենախոսության երկրորդ գլխում (էջ 40) կարելի էր անդրադառնալ XIX դարի վերջին Սևանի ավազանում կատարված հնագիտական աշխատանքներին: Մասնավորապես, Ա. Իվանովսկին Վարդենիկ (Գյոզալդարա) գյուղի մերձակայքում 1893 թ. հաշվառել է 17 դամբարաններ՝ քարերով օղակված ստորգետնյա քարարակղներ, որոնցից 5-ը նա պեղել է: Ի դեպ, Ա. Իվանովսկու հրատարակված աշխատության մեջ տեղ են գտել նաև մարդաբանական տվյալներ (Ивановский 1911, 26-27):

3 Քննարկվող աշխատության հեղինակը վաղ բրոնզի շրջափուլի մասին խոսելիս (էջ 41) նշում է «մ.թ.ա. IV հազ. կեսերից մինչև մ.թ.ա. III հազ. վերջին քառորդ» ժամանակագրական միջակայքը: Բանն այն է, որ հիշյալ միջակայքի վերին սահմանը փոքրիկ ճշգրտման կարիք ունի: Ռադիոածխածնային հետազոտությունների վրա հիմնված թվագրության նորագույն սանդղակներում կուր-արաքսյան մշակույթի ավարտը համարվում է մ.թ.ա. III հազ. կեսը. տե՛ս Manning et al. 2018, 1548:

4 Էջ 100-ում ստենախոսը գրում է. «Կոորդինատային հորիզոնական և ուղղահայաց 2 առանցքները...»: Այստեղ անճշտություն չկա: Սակայն, երբ դիտարկվում են հարթության կոորդինատային առանցքները, ինքնըստինքյան հասկանալի է, որ կիրառվում են դեկարտյան ուղղանկյուն կոորդինատները, հատկապես նախորդ էջում արդեն խոսվել է X փոփոխականներից կախված գծային Y դիսկրիմինանտային ֆունկցիաների մասին: Այսինքն, կարելի էր ուղղակի գրել «կոորդինատային առանցքները», որտեղից կբխեր, որ դրանք երկուսն են (աբսցիսների *OX* ու օրդինատների *OY* առանցքներ) և ուղղահայաց են իրար:

5 Ատենախոսության հեղինակը բազմիցս անդրադառնում է կատակոմբային մշակույթը կրողներին՝ տեղին և շատ կարևոր համեմատություններ կատարելով: Կարծում ենք հետաքրքիր կլիներ նաև հարավուսական տափաստաններում հայտնաբերված մարդաբանական նյութը համեմատել Հայաստանի կատակոմբներում ի հայտ եկած ննջեցյալների կմախքների հետ: Բարեբախտաբար, ատենախոսությունում ներկայացված է նաև Արթիկի գանգաբանական հավաքածուն՝ որպես համեմատական նյութ: Իհարկե, սա դուրս է ուսումնասիրության բուն թեմայից և վերաբերում է ապագային:

Արված առաջարկներն ու փոքրաթիվ նկատառումներն ամեննին չեն ստվերում մեզանում առաջին անգամ կենսահնագիտության բնագավառում կատարված այս նոր, ծավալուն ու գնահատելի ուսումնասիրության ակներև արժանիքները: Սա մի աշխատանք է, որը շարադրված է ոչ միայն բառերով, այլև հավելվածներում ներկայացված հնամարդաբանական նյութի և դրան ուղեկցող հնագիտական գույքի լուսանկարներով ու տարբեր շրջափուլերի պատկանող դամբանադաշտերի քարտեզներով, թեման լուսաբանող տարաբնույթ աղյուսակներով, երկչափ ու եռաչափ գրաֆիկական պատկերներով: Սույն աշխատությունը Ռուզան Մկրտչյանի տասնամյակներ տևած հետազոտությունների տրամաբանական ամփոփումն է: Դրանց վերաբերյալ հրատարակվել են նրա տասնյակ ու տասնյակ գիտական աշխատությունները, որոնցից մի քանիսը՝ մենագրությունների տեսքով, իսկ զգալի մասը տեղ է գտել արտասահմանյան ծանրակշիռ գիտական ամսագրերում կամ միջազգային ժողովածուներում՝ հողվածների ձևով: Դժվար է Հայաստանում գտնել իմ սերնդակից որևէ հնագետի, որի պեղումներով հայտնաբերված հնամարդաբանական նյութը չի ուսումնասիրվել Ռուզան Մկրտչյանի կողմից: Միաժամանակ նա զբաղվել է նաև իրեն փոխարինող մասնագետներ պատրաստելու շնորհակալ գործով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ԲԿԿԿ-ի կողմից ղոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Սեղմագրում ներկայացված հրապարակումներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթներն ու ամփոփ շարադրանքը: Գտնում ենք, որ «Սևանի ավազանի կենսահնագիտությունը (միջին և ուշ բրոնզի դարաշրջաններ)» խորագրով ղոկտորական ատենախոսության հեղինակ Ռուզան Ալբերտի Մկրտչյանն արժանի է իր հայցած պատմական գիտությունների ղոկտորի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ.

S. Թումանյան Գ. Թումանյան

պ.գ.դ. Գ. Թումանյանի ստորագրությունը հաստատում է 22 ՁԵՆԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն՝ Ս. Թումանյան



17. 06. 2025 թ.